



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆՊԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Տ Հ

**ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

25 հոկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Անդամակցությամբ՝ Ռ. Նազարյանի  
Ա. Խաչափրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Խաչափուր Սուքիասյանի անհարական դիմումով գործը  
քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Ձ Ե Յ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Խաչափուր Սուքիասյանը 2012թ. սեպտեմբերի 29-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

... 1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նորմը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 18 և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. ՀՀ ընդունական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ ՀՀ վարչական դատարանի կողմից իրավակիրառ պրակտիկայում դրվագ մեկնաբանության շրջանակներում, ճանաչել իրավական որոշակիության սկզբունքին հակասող և անվավեր<sup>1</sup>:

3. ՀՀ ընդունական օրենսգրքի 105-րդ հոդվածում «մշգապես բնակվող» հասկացությունը ճանաչել իրավական որոշակիության սկզբունքին հակասող և անվավեր:

<sup>1</sup> Դիմողի կողմից թույլ է փրկել վրիպակ: Թե դիմումում, թե դիմումի եզրափակիչ մասում այս հոդվածը նշվել է որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերություն: Սակայն դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի նկարմամբ կիրառվել է ՀՀ ընդունական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը:

Դիմումի հեղինակը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ մագնանշելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները դատարանի մաքչելիության սկզբունքի վերաբերյալ, գրնում է, որ վիճարկվող նորմով նախարեսված կարգավորման պարագայում օրենսդիրը, ընդունական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակդերին վերջնական բնույթ փառուի եւ վերանայման ենթակա չինելու եւ հրապարակման պահից ուժի մեջ մինելու վերաբերյալ դրույթ նախարեսելով՝ ըստ էության բացառել է անձի կողմից ընդունական իրավունքի պաշտպանության վերաբերյալ վերաբերնին և վճռաբեկ դատարաններում դատական ակդի վերանայման վարույթ հարուցելու հնարավորությունը՝ դրանով իսկ սահմանափակելով անձի արդարադարության մարդելիության իրավունքը:

ՀՀ ընդունական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության վերաբերյալ դիմողը գրնում է, որ վիճարկվող նորմին ՀՀ վարչական դատարանի կողմից դրված մեկնաբանությունը չի համապատասխանում օրենքի որոշակիության սկզբունքին:

ՀՀ ընդունական օրենսգրքի 105-րդ հոդվածի առնչությամբ դիմողը գրնում է, որ դրվագ նորմի մեջ ուշադրության է արժանի «մշտապես բնակվող» եզրույթը, որն անձի համար բավարար չափով հսկակ եւ կանխափեսելի չէ, որպեսզի անձը կարողանա դրան համապատասխանեցնել իր վարքագիծը:

Դատական կազմը, ուսումնասիրելով դիմումն ու կից փասբաթերթերը եւ դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գրնում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետեւյալ պարզաբանությամբ.

## **1. ՀՀ ընդունական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության եւ 105-րդ հոդվածի վերաբերյալ**

- Նշյալ դրույթների մասով դիմումն ակնհայր անհիմն է, քանի որ դիմողը վիճարկելով այդ դրույթների սահմանադրականությունը՝ չի անդրադարձել այդ իրավադրույթների սահմանադրահրավական բովանդակությանը, չի ներկայացրել իրավական հիմնավորում դրանց հակասահմանադրականության վերաբերյալ: Մինչեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհավական դիմումի ընդունելիության հավելյալ պարփաղիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համարեքարում՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ ձեւավորել է իրավական դիրքորոշում,

համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պեսք է հիմնավորված լինի «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հագեցանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում, այլ բարձրացված է «փրավական որոշակիության սկզբունքին» այդ նորմերը հակասող են անվավեր ճանաչելու հարցը:

Բացի դրանից, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքներն են խախվվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախվման փասդի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ սահմանադրական դադարանի կողմից ՍԴՈ-839 որոշման մեջ արգահայքված իրավական դիրքորոշման՝ անհագական դիմումն ակնհայք անհիմն համարելու հիմք է:

- Միաժամանակ, դադարական կազմը գրնում է, որ դիմողն ըստ էության բարձրացրել է նշյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց: Դիմումի ընդհանուր գրամաբանությունը վկայում է, որ գործի փասդական հանգամանքների քննության հետ կապված՝ դիմողի համար առաջացած անքարենպասպ հետեւանքները նրա նկարմամբ կայացված համապարասիան դադարական ակտերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն անդրադարձել է դրանց կիրառման իրավաչափության հարցին՝ համադրելով դրանք ՀՀ գործող այլ օրենքների պահանջների հետ:

Եթե արար, դեկավարվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՈ-21 որոշման մեջ արգահայքված իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դադարական կազմը գրնում է, որ քննության առնվող դիմումում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախադեսված հիմք:

## **2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ**

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը 25.04.2012թ. ՍԴԿՈ/1-11 որոշմամբ մերժել է նշյալ դրույթի մասով անհարական դիմումի հիման վրա գործի քննությունը՝ հետևյալ պարագաներությամբ:

Հղում կապարելով սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արդարադարձ իրավական դիրքորոշումներին (մասնավորապես, ՍԴՈ-664, ՍԴՈ-700, ՍԴՈ-758)՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատական կազմը խնդրու առարկա հարցի վերաբերյալ արդարադարձի է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ կողեզիալ, դպյալ դեպքում՝ 5 դատավորի կազմով, **Վերջնական որոշման կայացումը՝ հարկավես ժամկետային սահմանափակում ունեցող գործերով, բնորոշ է մասնագիտացված դատարաններին, եւ նման կարգի առկայության իրավաչափությունը ներդաշնակ է սահմանադրական դատարանի նշյալ որոշումներում արդարադարձ իրավական դիրքորոշումներին:** Եվրախորհրդի նախարարների կոմիտեն, մասնավորապես, 1995թ. փետրվարի 7-ի R(95) 5 հանձնարարականի 1-ին հոդվածում, որպես կանոն, շեշտելով սպորտայս դատարանի դատական ակտի բողոքարկման հնարավորության անհրաժեշտությունը, միաժամանակ նկատի է ունեցել, որ «եթե նպարակահարմար է համարվում նախարեւել շեղում նշված սկզբունքից, ապա այդ շեղումը պետք է հիմնվի օրենքի վրա եւ պետք է համապարախանի արդարության ընդհանուր սկզբունքներին»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում հետևողականորեն արդարադարձում է այն սկզբունքային իրավական դիրքորոշումը, որի համաձայն՝ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազարությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան **Պայմանագործող պետություններին չի պարփակրում սպեղծել վերաբերնից կամ վճռաբեկ դատարաններ...** (մասնավորապես՝ Poitrimol v. France, գանգապ թիվ 14032/88, 1993 թ. նոյեմբերի 23-ի վճիռ, պարբ. 13-15): Այս հանգամանքն իր արդացոլումն է գտել նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշման մեջ: Իսկ ՍԴՈ-700 որոշման 5-րդ կետում անդրադառնալով ընդունական իրավունքների պաշտպանության վեճերով ըստ Էության կայացված դատական ակտերի վերջնական լինելու, բողոքարկման զինելու եւ իրապարակման պահից ուժի մեջ մփնելու իրավակարգավորման սահմանադրականության խնդրին՝ սահմանադրական դատարանը գտել է, որ այդպիսի իրավակարգավորումը նպարակ ունի «... վերացնել ընդունական իրավունքի խախտումները մինչեւ ընդունականությունների ավարտը, այլապես խախտում իրավունքների վերականգնման վերաբերյալ դատարանի վճիռը

կկորցնի իր իմասպը՝ դիմողը չի կարող մասնակցել ընդունված կամ ընդունվել»:

Այսպիսով, դարձական կազմն արձանագրում է, որ ՀՀ վարչական դարձավարության օրենսգրքի վերոհիշյալ նորմի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն առաջադրում է այնպիսի հարց, որի վերաբերյալ առկա են սահմանադրական դարձարանի որոշումներ, որը «Սահմանադրական դարձարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն դիմումի ընդունումը մերժելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

OCTOBER.

Քաղաքացի Խաչափուր Սուքիասյանի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Եախազահոն



25 հնկդեմքերի 2012 թվականի  
ՍԴԴԿՈ/1-23